# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 5 | Նոյեմբեր | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 5 | Նոյեմբեր | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 0552559739 |
| **Ճշգրտվող հաշիվ վավերագրի** | |
| Սերիա | Համար |
| | |
| **Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ** | |
| | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

| Արտադրանք, ապրանք առաքող անձ | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ | | |
|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզային հարկ | Այդ թվում՝ բնապահպանական վճար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 53156419բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

05/11/2019 14:43:45

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

25 սեպտեմբերի, 2019թ.

քաղ. Ստեփանավան

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Ա.Վ. Սերոբյանս, քննարկելով վարույթիս թիվ 53156419 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի օգոստոսի 25-ին ժամը 14:20-ին և 2019 թվականի օգոստոսի 28-ին ժամը 16:20-ին Լոռու մարզի Վարդաբլուր գյուղի Կենտրոնական 97 հասցեի բնակչուհի Մարինե Վիկտորի Միրզոյանի՝ ոստիկանության Ստեփանավանի բաժնում տրված հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 11.08.2019 թվականին ժամը 12:00-ի սահմաններում Լոռու մարզի Վարդաբլուր գյուղի Կենտրոնական 97 տան մոտակայքում գտնվող կանգառում Լոռու մարզի Վարդաբլուր գյուղի բնակիչ Գագիկ Լադոյի Քամալյանը կենցաղային հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ ձեռքերով 3-4 անգամ հարվածներ է հասցրել իր կնոջ՝ Մարինե Վիկտորի Միրզոյանի գլխի և դեմքի շրջանին, պատճառել ֆիզիկական ցավ, ենթարկել ծեծի:

Բացի այդ 28.08.2019 թվականի ժամը 13:00-ի սահմաններում Լոռու մարզի Վարդաբլուր գյուղի Կենտրոնական 97 հասցեում գտնվող իրենց տան բակում կենցաղային հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ Գագիկ Քամալյանը փախտակի կտորով երեք անգամ հարվածներ է հասցրել Մարինե Միրզոյանի ձախ թիակային շրջանին և պատճառել ֆիզիկական ցավ՝ ենթարկելով ծեծի:

Մարինե Միրզոյանն իր բացատրության մեջ նշել է, որ Գագիկ Քամալյանի հետ չի հաշտվել և ցանկանում է, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության:

Դեպքի առթիվ 2019 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնում հարուցվել է թիվ 53156419 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ և 118-րդ հոդվածների հատկանիշներով:

2019 թվականի սեպտեմբերի 2-ին որոշում է կայացվել քրեական գործը քննիչին հանձնելու մասին, նույն թվականի սեպտեմբերի 3-ին քրեական գործը մուտքագրվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժին և ընդունվել վարույթ:

2019 թվականի սեպտեմբերի 4-ին Մարինե Միրզոյանը ճանաչվել է տուժող և հարցաքննվել: Մարինե Միրզոյանը իր ցուցմունքներում նշել է, որ, Գագիկ Քամալյանը չարաշահում է ալկոհոլային խմիչքներ, օգտագործում է օղի և սպիրտ: Ալկոհոլ օգտագործած վիճակում իրեն պահում է ագրեսիվ, ցանկացած աննշան հարցի շուրջ վիճաբանում է իր հետ, ճվում, գոռում և հայհոյանքներ է տալիս, նաև ծեծի է ենթարկում: Ագրեսիվ վիճակը Գագիկ Քամալյանի մոտ տևում է շուրջ 2 ժամ, որից հետո նա քնում է, իսկ արթնանալուց հետո հաճախակի չի հիշում թե ինչ է իր հետ կատարվել, կամ ինչ պատճառով է վիճել:

2019 թվականի սեպտեմբերի 24-ին Գագիկ Քամալյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ և 118-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններ կատարելու համար:

Մեղադրյալ Գագիկ Քամալյանը իր ցուցմունքում նույնպես նշել է, որ չարաշահում է ոգեիզ խմիչքներ և ոգեիզ խմիչ...

անձնական հարցի շուրջ վիճում է կնոջ հետ, որի ժամանակ կարող է վիրավորել և հարվածել նրան, որից հետո գնում և քնում է: Իր ագրեսիվ վիճակը կարող է տևել մի քանի րոպեից մինչև 1-2 ժամ, կախված հարբածության վիճակից: Սթափ վիճակում իրեն հանգիստ է պահում, որևէ մեկի հետ չի վիճում: Ոգելից խմիչք օգտագործած լինելու հաջորդ օրը հաճախակի չի հիշում, թե ինչ է նախորդ օրը տեղի ունեցել ու ինչպատճառով է վիճել կնոջ հետ :

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Գագիկ Քամալյանը 2016 թվականի հունվարի 29-ից հաշվառված է «Սպեփանավանի Բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբույժի կաբինետում «Խրոնիկական ալկոհոլիզմ II-րդ աստիճանի ախտորոշմամբ: Նա «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում և նարկոլոգիական կաբինետում հաշվառված չէ:

«Ստեփանավանի Բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից ստացվել է Գագիկ Լադուշի Քամալյանի մեծահասակի N 8161 ամբուլատոր բժշկական քարտը:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզաբանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

## ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՓԲ ընկերության փորձագետներին:
2. Փորձաքննության ներկայացնել սույն որոշման օրինակը, մեղադրյալ Գագիկ Քամալյանին: Թիվ 53156419 քրեական գործի նյութերը և Գագիկ Լադուշի Քամալյանի մեծահասակի N 8161 ամբուլատոր բժշկական քարտը կներկայացվեն փորձաքննությանընթացքում:
3. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

- Մեղադրյալ Գագիկ Լադուշի Քամալյանը որևէ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ այլ հիվանդագին վիճակով արդյոք տառապել է և ներկայումս տառապում է, թե ոչ:
- Մեղադրյալ Գագիկ Լադուշի Քամալյանը իրեն մեղսագրվող արարքները կատարելուց առաջ, կատարելու պահին և դրանից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո՛, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ, երբվանի՞ց, այդ հիվանդությունը կրե՞լ է քրոնիկ բնույթ, թե՞ ոչ, վերջինիս մոտ տկարամտություն կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակ եղե՞լ է, թե՞ ոչ և արդյո՞ք նա կարող էր գիտակցել իր գործողության վտանգավորությունը և կարող էր արդյո՞ք ղեկավարել այդ գործողությունը, թե՞ ոչ:
- Եթե Գագիկ Լադուշի Քամալյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ առկա է հոգեկան այլ հիվանդագին վիճակ, ապա կարող էր արդյո՞ք մեղսագրվող արարքները կատարելու պահին այդ հիվանդությունը զրկել նրան իր գործողությունների փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից, թե՞ ոչ, արարքները կատարելիս Գագիկ Լադուշի Քամալյանը գիտակցել է արդյո՞ք իր արարքի փաստական

հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը և ունակ է եղել արդյո՞ք ղեկավարել իր գործողությունները, թե՞ ոչ:

- Գագիկ Լադուշի Քամալյանը իրեն վերագրվող արարքները կատարելու պահին գտնվել է արդյո՞ք պաթոլոգիական աֆեկտի վիճակում, թե՞ ոչ:
- Մեղադրյալ Գագիկ Լադուշի Քամալյանը հանցագործությունները կատարելու պահին գտնվել է արդյոք անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակության վիճակում, թե ոչ, ներկայումս մեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո ապա ինչ տիպի բուժհաստատություններում:
- Եթե մեղադրյալ Գագիկ Լադուշի Քամալյանը հարկադիր բուժման կարիք ունի, ապա այդ կապակցությամբ կա՞ն, արդյոք, բուժման համար հակացուցումներ:
- Հաշվի առնելով մեղադրյալ Գագիկ Լադուշի Քամալյանի հոգեվիճակը և նրա մոտ առկա հիվանդությունը կարող էր արդյո՞ք նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները և վերարտադրել դրանք, թե՞ ոչ, Արաքսի Կավալյանի հոգեկան վիճակը նրան թույլ տալիս է մասնակցել քննչական և դատավարական գործողություններին թե ոչ:
- Մեղադրյալ Գագիկ Լադուշի Քամալյանը հանցագործությունները կատարելու պահին գտնվել է այնպիսի հուզական վիճակում, որը կարող էր էականորեն ազդել նրա գիտակցության և վարքի վրա, թե ոչ, կարող էր ունենալ հիշողության կորուստ, թե ոչ:

4. Փորձագետներին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ առաջադրված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:
5. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

*Բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝* *Ս.Վ.Սերոբյան*